

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-129-15.09.2017-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1199-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(Պ-129-15.09.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 130.1-ին հոդվածով.

«Հոդված 130.1. Բուժաշխատողների գործունեությանը խոչընդոտելը

1. Բուժաշխատողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկից հինգ հարյուրապատիկի չափով:

2. Նույն արարքը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում է կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:»:

Պ-129-15.09.2017-ՊԻՄԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել նոր 130.1-ին հոդվածով.

«Հոդված 130.1. Բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձանց կամ բուժաշխատողների գործունեությանը խոչընդոտելը

1. Բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձանց կամ բուժաշխատողների օրինական մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

2. Նույն արարքը, որը կատարվել է բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված բազմաթիվ փոփոխությունների և լրացումների արդյունքում հստակ սահմանվել են բժշկական ծառայությունների մատուցման ոլորտում ներգրավված սուբյեկտների շրջանակը և իրականացվող գործունեության բնույթը: Մասնավորապես, սահմանվել է բուժաշխատողների սպառիչ բնութագիրը, առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեության տեսակները և հիմքերը: Սպառիչ սահմանվել են նաև բուժաշխատողների իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, բուժաշխատող է համարվում առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնող, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտական գործունեություն իրականացնող ու դրա համար համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում և նախատեսված շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ունեցող, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեություն իրականացնող ֆիզիկական անձը (հոդված 1, մաս 6): Օրենքը հստակ սահմանում է նաև այն գործունեությունը, որը իրականացնում է բուժաշխատողը: Այն է, բուժաշխատողի կողմից իր կրթությանը, որակավորմանը և մասնագիտական բնութագրին համապատասխան, իր իրավասության շրջանակներում, Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ իրավական ակտերին, չափորոշիչներին, կլինիկական ուղեցույցներին, պացիենտի վարման գործելակարգերին և իր աշխատանքային պարտականություններին համապատասխան աշխատանքների իրականացումը (հոդված 1, մաս 8):

<<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվում է նաև Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց հասկացությունը: Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բժշկական օգնություն և սպասարկման որոշակի տեսակ կամ տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից, իրավական վիճակից և սեփականության ձևից, կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման հետ կապված իրավահարաբերությունները մենք առավել հաճախ դիտարկում ենք պացիենտի տեսանկյունից, որի իրավունքների իրականացման հետ կապված բազմաթիվ երաշխիքներ ամրագրված են մեր ներպետական օրենսդրությամբ: Կարծում ենք կարիք կա օրենսդրական միջամտություն իրականացնել վերոշարադրյալ իրավահարաբերությունների առավել համապարփակ կանոնակարգման համար բուժաշխատողների իրավունքների իրականացման երաշխիքների տեսանկյունից: Վերոշարադրյալ փոփոխություններն ու լրացումներն, այնուամենայնիվ, չեն հանգեցրել բուժաշխատողների նկատմամբ վիրավորանքի և/կամ բռնության դեպքերի վերացմանը: Ցավոք, օրենքում ամրագրված իրավանորմերը բավարար չէղան իրավիճակը շտկելու համար: Առկա իրավիճակի փոփոխությունը մեծապես

կապում ենք համապատասխան երաշխիքների բացակայությամբ մասնավորապես, քրեաիրավական ոլորտում: Կարծում ենք, սահմանելով համապատասխան հանցակազմը՝ իր օբյեկտի, սուբյեկտի, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առկայությամբ, հասարակության ընկալման մեջ կունենանք նկատելի տեղաշարժ բուժաշխատողների և նրանց գործունեության նկատմամբ:

Բուժաշխատողները հանդիսանում են մեր երկրի առողջապահական համակարգի հիմնասյուները: Իրականացնելով ծանր և պատասխանատու աշխատանք, ունենալով օրենսդրությամբ ամրագրված բազմաթիվ պարտականություններ, բուժաշխատողները բախվում են նաև այնպիսի խնդիրների հետ, որոնք որևէ առնչություն չունեն իրենց մասնագիտական առօրեայի հետ: Մասնավորապես, բուժաշխատողներն իրենց մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարբերաբար ենթարկվում են բռնության, վիրավորանքի և այլն: Խնդրի համապարփակ լուծումը չի տալիս նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը: Քրեաիրավական պատասխանատվության համար անհրաժեշտ է պատճառահետևանքային կապի առկայությունը արարքի և դրա առաջացրած հետևանքի միջև: Կարծում ենք, հնարավոր լուծումներից մեկն էլ կարող է լինել ձևական հանցակազմի ներդնումը, որը պատասխանատվություն կառաջացնի ինքնին արարքի կատարման համար: Հանցակազմ, որի քրեաիրավական հետևանքը չի լինի պարտադիր պայման, այլ հակաիրավական արարքի կատարումն ինքնին բավարար պատասխանատվության ենթարկելու համար:

Բուժաշխատողների նկատմամբ իրականացվող գործողությունները շատ հաճախ դուրս են քրեաիրավական տիրույթից, սակայն նրանց նկատմամբ իրականացվող գործողությունները խոչընդոտում են իրենց մասնագիտական պարտականությունների կատարմանը: Այդ գործողությունները նախաձեռնող անձանց պատասխանատվության համար, ըստ էության, մեր օրենսդրությունը նորմեր չի սահմանում:

Ներկայացված առաջարկի հիմնական նպատակը ոչ թե պատժիչ համակարգի խստացումն է, այլ բուժաշխատողների նկատմամբ իրականացվող ոտնձգությունների կանխումն ու կանխարգելումը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում համանման նորմեր գործում են, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում զինձառայողի, լրագրողների օրինական գործունեությանը խոչընդոտելու համար («Քր. Օր. Հոդվածներ 164, 360): Հոդվածների էությունից պարզ է դառնում, որ մասնագիտական և աշխատանքային պարտականությունների իրականացման ընթացքում զինձառայողին, լրագրողին վիրավորելը առաջացնում է քրեական պատասխանատվություն: Հաշվի առնելով բուժաշխատողների գործունեության առանձնահատկությունները, անհրաժեշտ ենք համարում սահմանել քրեական պատիժ բուժաշխատողների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի և դրանից բխող հետագա գործողությունների համար:

Բուժաշխատողի նկատմամբ իրականացվող ցանկացած ոտնձգություն խոչընդոտում է նրանց մասնագիտական և աշխատանքային պարտականությունների կատարմանը, ինչը կարող է հանգեցնել հաջորդ պացիենտի առողջության վատթարացման:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը բազմիցս բարձրաձայնել է խնդրի առկայության մասին և հորդորել իրավապահ համակարգին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումները¹: Սակայն, առանց իրավական բազայի ապահովման խնդիրը չի ստանա իր համակողմանի լուծումը: Չունենալով ոլորտը

կանոնակարգող իրավանորմեր, թույլատրում ենք նման դեպքերի տագնապալի չափերի հասնելը:

Հայաստանի Հանրապետությունում չունենք պաշտոնական վիճակագրական տվյալներ, որոնք թույլ կտան հստակ եզրակացություն անել բժիշկների նկատմամբ իրականացվող ոտնձգությունների մասին թվային արտահայտմամբ: Այս հանգամանքը ևս խոսում է քննարկվող ոլորտին հատկացված ոչ բավարար ուշադրության մասին:

Սակայն պրակտիկայի և հարուցված քրեական գործերի ուսումնասիրությունից ինքնին պարզ է դառնում նման դեպքերի հաճախականության հանգամանքը²: Վերջին տարիներին բազմաթիվ են հրապարակումներն այն մասին, որ բուժաշխատողների նկատմամբ բռնություն է կատարվել, նրանք <<արժանացել 1 Այս մասին բազմաթիվ հրապարակումներ են տեղ գտել տարաբնույթ լրատվամիջոցներում՝ օրինակ,

<http://www.news.am> <http://www.ankakh.com> <http://www.galatv.am> <http://www.aravot.am>, և այլն: 2 Տե՛ս, <http://www.police.am/view/շտապօգնության-խմբի-հետ-տեղի-ունեցած-միջադեպի-առնչությամբ-հետաքննություն-է-կատարվում.html>

են>> վիրավորանքի, ենթարկվել են ծեծի, իսկ Գյումրիում շտապ օգնության բժշկի այցն ավարտվեց վերջինիս մահով³:

Բազմաթիվ օտարերկրյա պետություններ իրենց ներպետական օրենսդրությամբ պատասխանատվության տարաբնույթ հիմքեր են նախատեսել բուժաշխատողների նկատմամբ իրականացվող ոտնձգությունների կանխարգելման համար:

Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում իրականացվող օրենսդրական բարեփոխումների արդյունքում, պետական դումայում քննարկվում է բուժաշխատողների նկատմամբ իրականացվող բռնությունների վերաբերյալ նախագիծ⁴: Նախատեսվում է լրացում կատարել ՌԴ քրեական օրենսգրքում⁵:

Վերոնշյալ իրավակարգավորումը անշուշտն առավել խիստ պատասխանատվություն է նախատեսում և առաջացնում է դատվածություն: Սույն օրենսդրական նախաձեռնության սանկցիան սահմանում է ազատազրկում⁶:

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարությունը պարբերաբար իրականացնում է պաշտոնական վիճակագրություն բուժաշխատողների նկատմամբ իրականացվող ոտնձգությունների վերաբերյալ: Այսպիսով, համաձայն ՌԴ ԱՆ վիճակագրական տվյալների 2016 թվականի ընթացքում 1226 ոտնձգություն է կատարվել բուժաշխատողների կյանքի կամ առողջության նկատմամբ⁷: Միջինացված տվյալների համաձայն յուրաքանչյուր ամիս 1-ից 2 դեպք⁸:

Վերոնշյալ վիճակագրությունը վերաբերվում է միայն այն դեպքերին, երբ անձանց արարքներում առկա են եղել հանցակազմի տարրեր և հարուցվել են քրեական գործեր: Կարծում ենք, բժիշկների նկատմամբ իրականացվող ոտնձգությունները, որոնք սուբյեկտիվ գործոնների և օբյեկտիվ հանգամանքների հետևանքով չեն հանգեցրել քրեական գործերի հարուցմանը անհամեմատ ավելի են, քանի վիճակագրությունում ամրագրված թվերը⁹:

Չինաստանում ևս նման նախադեպեր լինում են: Հետազոտությունների համաձայն բուժաշխատողների նկատմամբ իրականացվող բռնությունները կրում են պարբերական բնույթ: Այսպես, 2000 թվականից սկսած բուժաշխատողների նկատմամբ բռնության թիվը աճել է 11 - ով¹⁰: 2012 թվականին 7 բուժաշխատող է սպանվել Չինաստանում: 2013 թվականին այդ թիվը հասել է իննի¹¹: Ներկայումս Չինաստանում նախաձեռնել են մի շարժում, 3 Տե՛ս, <http://www.galatv.am>, 2011 թվականի հունիսի 26-ին Գյումրիի ոստիկանություն ահազանգ էր

ստացվել մահացել էր բուժօգնություն ցույց տված վիրաբույժը:

<https://news.am/arm/news/90492.html>

4 Տե՛ս, <http://www.sozd.parliament.gov.ru/bill/139439-7>

5 Законопроект No139439-7 “О внесении изменений в Уголовный кодекс Российской Федерации

....., части защиты жизни и здоровья пациентов и медицинских работников”:

6 Տե՛ս, <http://www.zakonrf.info>

7 Տե՛ս, <http://www.sozd.parliament.gov.ru/bill/139439-7>

8 Տե՛ս, <https://24.kg/archive/en/perekrestok/180672-news24.html/>

9 Կարծում ենք, մեր երկրում իրավիճակի տարբերությունը այդքան էլ ակնառու չէ:

10 Տե՛ս, <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC1295659/>

11 Տե՛ս, <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC1295659/>

որը կոչվում է <<վերջ բուժաշխատողների նկատմամբ բռնություններին>> << Stop violence against medical workers>>:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում այս հարցը բազմաթիվ օրենսդրական նախաձեռնությունների հիմք է հանդիսացել: Այուսամենայնիվ այս հիմնախնդիրը մինչ այժմ չի ստացել իր օրենսդրական ամրագրումը դաշնային օրենսդրության մակարդակով: Տարբեր Նահանգներ սահմանել են պատասխանատվության տարաբնույթ նորմեր բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու համար: Կալիֆորնիա Նահանգում պատասխանատվություն է նախատեսվում վերոնշյալ արարքների համար: 12 Իրավիճակի վատթարացման հետևանքով ԱՄՆ-ում դաշնային օրենսդրության մակարդակով իմպերատիվ նախատեսվում է բժշկական հաստատությունների կողմից հստակ չափորոշիչների սահմանում աշխատանքի ընթացքում բուժաշխատողների անվտանգության ապահովման համար (workplacesafety standards): Սակայն իրականացվող քայլերը անբավարար են գնահատվում արդյունավետությամբ տեսանկյունից¹³:

Առավել խստ պատասխանատվություն է նախատեսվում Ավստրալիայի օրենսդրությամբ: Բուժաշխատողի նկատմամբ ցանկացած բնույթի ոտնձգությունը պատժվում է 14 տարվա ազատազրկմամբ: Ավստրալիայում իրականացվող հետազոտությունները փաստում են, որ վերջին 5 տարիների ընթացքում ավելի քան 24.500 բուժաշխատող ենթարկվել է որևէ տիպի բռնության կամ ոտնձգության իր աշխատանքային գործունեության ընթացքում¹⁴:

Օտարերկյա պետությունների բժշկական միավորումներն իրենց հավաքների ընթացքում ևս անդրադառնում են այս հարցին, ինչը վկայում է խնդրի արդիականության մասին¹⁵: Այսպես, այդ համաժողովների ընթացքում պարբերաբար ընդունվում են փաստաթղթեր¹⁶, որոնք սահմանում են բուժաշխատողներին անհրաժեշտ երաշխիքներ (guarantee) իրենց մասնագիտական, աշխատանքային պարտականությունների իրականացման համար¹⁷: Բազմաթիվ իրավունքների և երաշխիքներին զուգահեռ տեղ է գտել նաև անձի

12 Տե՛ս, <https://www.scientificamerican.com/article/epidemic-of-violence-against-health-care-workersplagues-hospitals/>

13 Տե՛ս, <https://www.scientificamerican.com/article/epidemic-of-violence-against-health-care-workersplagues-hospitals/>

Hospital administrations and the judicial system do little to prevent assaults against nurses and other caregivers by patients:

14 Տե՛ս, <https://www.scientificamerican.com/article/epidemic-of-violence-against-health-care-workersplagues->

hospitals/

15 Տե՛ս, <http://www.samedical.org/rights-and-resposibilities-of-doctors-and-patients-jul012.pdf>

16 Նմանատիպ փաստաթուղթ է Ամերիկայի Միացյալ Նահանգների բժիշկների ասոցիացիայի կողմից

ընդունված փաստաթուղթը: Medical Staff Rights and Resoposibilities. Adopted at the 2017 Annual

meeting of American Medical Association House of delegates (AMA Policy H-225.942),

<http://www.amaassn.org>:

org:

17 Տե՛ս, <http://www.ama-assn.org/sites/default/files/media-browser/public/omss/a17-omss-medical-staffrights-responsibilities>.

անվտանգությունը (security of the person)¹⁸: Այս երաշխիքը ևս մեկ անգամ փաստում է բարձրաձայնված խնդրի արդիականության մասին:

Առաջարկվող լուծումներ

Մեր առաջարկած նախագիծը քրեաիրավական ոլորտում է, առաջացնում է դատվածություն: Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել միջազգային փորձը: Համեմատության մեջ դիտելով, կարող ենք փաստել այն հանգամանքը, որ մեր նախագիծը միևնույն արարքի կատարման համար առավել մեղմ

կարգավորումներ է նախատեսում, քան օտարերկրյա բազմաթիվ պետություններ:

Առաջարկում ենք լրացում կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Առաջարկվող նախագծով քրեական օրենսգրքը լրացվում է 130.1 հոդվածով

և կրում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կամ բուժաշխատողների գործունեությանը խոչընդոտելը վերնագիրը: Այն

պատասխանատվություն է առաջացնում բուժաշխատողին և բուժօգնություն

իրականացնող անձին իր մասնագիտական գործունեության իրականացմանը

խոչընդոտելու համար: Հոդվածի վերնագրից պարզ է դառնում, որ

պատասխանատվություն է նախատեսվում ոչ միայն բուժաշխատողին այլ նաև

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց խոչընդոտելու

համար: Մեր օրենսդրության համաձայն բժշկական օգնություն և սպասարկում

իրականացնող անձինք են համարվում այն հիմնարկություններն, իրավաբանական

անձինք, ովքեր տրամադրում են բուժօգնության և սպասարկման որոշակի տեսակ

կամ տեսակներ:

Ակնկալվող արդյունք

Նախագծի ընդունման արդյունքում օրենսդրությամբ կամրագրվեն դրույթներ, որոնք

պատասխանատվություն կառաջացնեն բուժաշխատողներին կամ բուժօգնություն և

սպասարկում իրականացնող անձանց օրինական գործունեությանը խոչընդոտելու համար:

Կարծում ենք, այն կապահովի գործնականում վերը քննարկված խնդրի լուծումը՝ դրանով

իսկ երաշխավորելով բուժաշխատողների և բուժօգնություն իրականացնող անձանց

օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը և հիմք կհանդիսանա մեր

հասարակությունում ձևավորված արատավոր երևույթի նվազեցման, կանխարգելման և

իսպառ վերացման ուղղությամբ:

18 Տե՛ս, նույն տեղում: Medical Association states rights and responsibilities of doctors and patients.

Security of the person includes the right to physical autonomy and the right to be free from violence. __